# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 14

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 14 փետրվարի 2018 թվականի թիվ 3 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին

2. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 11 նոյեմբերի 2016 թվականի թիվ 42-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի ղեկավարին կից համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների խորհուրդ ստեղծելու մասին,

3. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 11 նոյեմբերի 2016 թվականի թիվ 41-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի ղեկավարին կից համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ ստեղծելու մասին

4. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողակտորներից օտարելու համաձայնություն տալու մասին

5. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողակտորներից վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին

6. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 19 հունվարի 2018 թվականի թիվ 3 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և հաստատելու մասին

7. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 19.01.2018 թ.-ի թիվ 2 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

8. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Էդգար Վալերիկի Հայրապետյանի դիմումը քննարկելու մասին

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________________

2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________________

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________________

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________________

5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________________

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________________

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________________

8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________________

9. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՈԼԵՆ ____________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ Արենի: 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 15

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ N 42 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի բ/ ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>>. Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասին 34-րդ կետի պահանջներով Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 11 նոյեմբերի 2016 թվականի << ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ավագանու 30 նոյեմբերի 2014 թվականի թիվ 29 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենիի համայնքի ղեկավարին կից համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների խորհուրդ ստեղծելու մասին>> թիվ 42 որոշումը,

2. Ստեղծել Արենի համայնքի ղեկավարին կից համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների խորհուրդ և հաստատել հանձնաժողովի անհատական հետևյալ կազմը

1. Հուսիկ Սահակյան - Արենի համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,

2. Սմբատ Սարգսյան - Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ- ճարտարապետ, խորհրդի նախագահի տեղակալ

3. Վոլոդյա Հարությունյան - Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- իրավախորհրդատու, խորհրդի քարտուղար

4. Վարդան Շահինյան - Արենիի համայնքապետարանի առաջատար մասնագետ- հողաշինարար, խորհրդի անդամ

5. Նորայր Գրիգորյան - Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ- առևտրի, գովազդի և տուրիզմի զարգացման պատասխանատու, խորհրդի անդամ

6. Միեր Ալավերդյան - Արենի համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ

7. Սևակ Ավետիսյան - Արենի համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ

8. Շահեն Անտոնյան - Արենի համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ

3. Առաջարկել խորհրդին գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2017 թ.-ի դեկտեմբերի 15-ի Արենի համայնքի ղեկավարին կից, Արենի համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին N 56 -Ն որոշմամբ սահմանված կարգով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ__________
2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ__________
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ__________
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ__________
5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ__________
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ__________
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ__________
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ__________
9. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ__________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 16

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 41 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին, 1-ին կետի, բ/ ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 11 նոյեմբերի 2016 թվականի <<ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ավագանու 30 նոյեմբերի 2014 թվականի թիվ 28-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ ստեղծելու մասին>> թիվ 41 որոշումը:

2. Ստեղծել Արենի համայնքի ղեկավարին կից համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման, կատարման և վերահսկման) խորհուրդ և հաստատել խորհրդի հետևյալ անհատական կազմը՝

1. Հուսիկ Սահակյան - Արենի համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,

2. Գևորգ Սիմոնյան - Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահի տեղակալ,

3. Մանվել Գրիգորյան – Արենիի համայնքապետարանի գլխավոր մասնագետ-ֆինանսիստ, խորհրդի քարտուղար,

4. Զեմֆիրա Հարությունյան - Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-տնտեսական զարգացման պատասխանատու, խորհրդի անդամ

5. Ռուբեն Գասպարյան - Արենի համայնքի ղեկավարի խորհրդական, խորհրդի անդամ

6. Սաշիկ Կարապետյան - Արենի համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ

7. Արծրունի Իսրայելյան - Արենի համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ

8. Անուշավան Ավետիսյան - Արենի համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ

3. Առաջարկել խորհրդին գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2017 թ.-ի դեկտեմբերի 15-ի Արենի համայնքի ղեկավարին կից, Արենի համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին N 56 -Ն որոշմամբ սահմանված կարգով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ______

2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ______

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ______

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ______

5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ______

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ______

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ______

8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ______

9. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ ______

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 17

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հողային օրենսգրքի>> 63-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝

1) 0.28963 հա (ծածկագիրը՝ 10-008-0102-0075 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 18102 (տասնութ հազար մեկ հարյուր երկու) ՀՀ դրամ:

2) 0.76729 հա (ծածկագիրը՝ 10-036-0102-0074 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 47956 (քառասունյոթ հազար ինը հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

3) 0.20368 հա (ծածկագիրը՝ 10-036-0102-0073 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 12730 (տասներկու հազար յոթ հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

4) 1 հա (ծածկագիրը՝ 10-036-0109-0135 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 62500 (վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

5) 1.01147 հա (ծածկագիրը՝ 10-036-0102-0076 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 63217 (վաթսուներեք հազար երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ:

6) 0.15723 հա (ծածկագիրը՝ 10-036-0301-0160 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 29088 (քսանինը հազար ութսունութ) ՀՀ դրամ:

7) 0.38768 հա (ծածկագիրը՝ 10-036-0301-0162 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 71721 (յոթանասունմեկ հազար յոթ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ:

8) 0.15452 հա (ծածկագիրը՝ 10-036-0301-0163 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 28586 (քսանութ հազար հինգ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ:

9) 0.16531 հա (ծածկագիրը՝ 10-036-0301-0161 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 30582 (երեսուն հազար հինգ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ:

2. Հաշվի առնելով այն, որ 2017 թվականի նոյեմբերի 2-ին նախկին Ագարակաձոր համայնքում կայացել է հողերի աճուրդ-վաճառք, սակայն հողակտորների կարգերի անհամապատասխանության պատճառով պետական գրանցում չեն ստացել: Ելնելով անհրաժեշտությունից՝ Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի տարածքում գտնվող ներքոնշյալ հողերի համար անցկացվում է կրկնակի աճուրդ վաճառք:

1) 0.02967 հա (ծածկագիրը՝ 10-004-0013-0012 նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 101472 (հարյուրմեկ հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ:

2) 0.26974 հա (ծածկագիրը՝ 10-004-0131-0026 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 187470 (մեկ հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

3) 0.26957 հա (ծածկագիրը՝ 10-004-0131-0025 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 187352 (մեկ հարյուր ութսունյոթ հազար երեք հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:

4) 0.10503 հա (ծածկագիրը՝ 10-004-0136-0008 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 120260 (մեկ հարյուր քսան հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

5) 0.18492 հա (ծածկագիրը՝ 10-004-0136-0006 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 211734 (երկու հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

6) 0.49837 հա (ծածկագիրը՝ 10-004-0122-0005 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը աճուրդով

օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 570634 (հինգ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝

1) 3 հա (ծածկագիրը՝ 10-020-0126- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 555000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝

1) 0.14350 հա (ծածկագիրը՝ 10-037-0002- նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, գործառնական նշանակությունը՝ գյուղ. արտադրական) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 318570 (երեք հարյուր տասնութ հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

2) 0.00196 հա (ծածկագիրը՝ 10-037-0002-0012 նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 4352 (չորս հազար երեք հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________

8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

9. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________

10. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԻԵՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 18

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1.27671 հա (ծածկագիրը՝ 10-004-0124-0011 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը վարձակալությամբ, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 5000 ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ________
2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ________
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ________
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ________
5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ________
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ________
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ________
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ________
9. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ________
10. ՍԻՄՈՆՅԱՆ [illegible]________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 19-Ն

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 3 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 72-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 19 հունվարի 2018 թվականի << ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 3 որոշումը.

2. Սահմանել Արենի համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման 1-2 հավելվածների:

Կողմ -10 — Դեմ -0 — Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________
2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________
5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

9. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

10. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N1

Արենի համայնքի ավագանու

14.02.2017թվականի թիվ 19 որոշման

# ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ:

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ:

4. Արենի համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) սահմանամերձ բնակավայրերում՝ հիսուն հազար ՀՀ դրամ,*

2) ոչ սահմանամերձ բնակավայրերում՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

5. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) սահմանամերձ բնակավայրերում՝ տասը հազար ՀՀ դրամ,*

2) ոչ սահմանամերձ բնակավայրերում՝ երեսուն հազար ՀՀ դրամ:*

6. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ:*

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շին ությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,*
- 26.-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնակ ան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,*
- 50.-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնակ ան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,*
- 100.-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ:*

7. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար՝.

8. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

1) առևտրի օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

3) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

4) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

5) խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար յոթ հազար հինգ հարյուր դրամ,*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` տասնհինգ հազար դրամ,*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` քսանհինգ հազար դրամ:*

2) ոչ հիմնական շինությունների ներսում`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` երկու հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` չորս հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` ութ հազար դրամ:

10. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար` հարյուր հազար դրամ:

11. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների` միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար` օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար` տասը հազար դրամ:

12. համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար:

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` երկու հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` երեք հազար հինգ հարյուր դրամ,

3) սոցիալական գովազդի համար` զրո դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար` հազար հինգ հարյուր դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով

[illegible] ՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

*որպես [illegible] է 0.5 գործակից` համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 12-րդ [illegible]

Հավելված N2

Արենի համայնքի ավագանու

14.02.2017թվականի թիվ 19 որոշման

# ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համայնքի տարածքում աղբահանությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար սպասարկման վճար է սահմանվում՝

1) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 60 ՀՀ դրամ,

2) Խաչիկ բնակավայրում (որպես սահմանապահ բնակավայր) աղբահանության վճար է սահմանվում՝ համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 30 ՀՀ դրամ,

3) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 70 դրամ,

4) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 30 դրամ,

5) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 10 դրամ,

6) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ:

2. համայնքի տարածքում խմելու ջրի սպասարկման որակը բարձրացնելու համար խմելու ջրի սպասարկման վճար է սահմանվում՝

1) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտե ղտեղադրված չեն ջրաչափեր) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 60 ՀՀ դրամ,

2) հասարակական և արտադրական տարածքների 1քմ-ի համար (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր) ամսեկան 100 ՀՀ դրամ,

3) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված են ջրաչափեր) 1 խմ-ի համար 30 ՀՀ դրամ,

4) Խաչիկ բնակավայրում (որպես սահմանապահ բնակավայր) խմելու ջրի վճար է սահմանվում՝ համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 30 ՀՀ դրամ,

5) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազարակաձոր բնակավայրում բնակելի տների տնամերձ հողամասերի ոռոգման համար օգտագործվում է խմելու ջուրը, խմելու ջրի վարձ սահմանել 500 դրամ՝ մեկ տնտեսության համար:

3. համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում, որտեղ առկա են ինքնահոս ջրատարեր, որոնք սպասարկում է համայնքապետարանը, ոռոգման ջրի սպասարկման վճար սահմանել՝

1) 1 հա-ի համար տարեկան 20 հազար ՀՀ դրամ,

2) Աղավնաձոր բնակավայրում՝ 1խմ-ը 7 դրամ:

4. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության հայտերի գրանցման համար սահմանել հինգ հազար ՀՀ դրամ տեղական վճար:

5. Համայնքի սեփականության և օգտագործման ներքո գտնվող շարժական և անշարժ գույքը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց մրցույթում կամ աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը համայնքապետարանի բյուջե է վճարում՝ փոխհատուցման վճար՝ գույքի չափագրման, գնահատման, կադաստրային ծախսերի և հայտարարության տպագրման համար՝ համայնքապետարանի կողմից ներկայացված անդորրագրերի հիման վրա:

6. Համայնքի վարչական տարածքում արոտավարձ է սահմանվում յուրաքանչյուր բնակավայրի արոտավայրերի տարեկան զուտ եկամտի 15%-ի չափով՝ հաշված մեկ պայմանական միավոր անասնագլխաքանակի համար՝ 1հա չափաբաժնով: Այն անասունների համար, որոնք արոտների սեզոնի ընթացքում տեղափոխվում են արտագնա արոտների, արոտավարձը կհաշվարկվի 50%-ի չափով՝ անասնատիրոջ դիմում առկայության դեպքում: Ըստ բնակավայրերի արոտավարձի միջին չափ է սահմանվում.

1) Ազարակաձոր բնակավայրի համար՝ (7400+2500+8000)/3=5966,7x15 % ≈ 900 ՀՀդրամ

2) Աղավնաձոր բնակավայրի համար՝ (2500+8000)/2=5250x15% ≈ 800 ՀՀ դրամ

3) Արենի բնակավայրի համար՝ (2500+8000)/2=5250x15% ≈ 800 ՀՀ դրամ

4) Արփի բնակավայրի համար՝ 2500x15% ≈ 400 ՀՀ դրամ

5) Գնիշիկ բնակավայրի համար՝ (18600+13300+7400)/3=13100x15% ≈ 2000 ՀՀ դրամ

6) Ելփին բնակավայրի համար՝ (18600+13300+8000)/3=13300x15% ≈ 2000 ՀՀ դրամ

7) Խաչիկ բնակավայրի համար՝ (2700+8000)/2=5350x15% ≈ 850 ՀՀ դրամ

8) Չիվա բնակավայրի համար՝ (2500+7400)/2=4950x15% ≈ 800 ՀՀ դրամ

9) Ռինդ բնակավայրի համար՝ 8000x15% = 1200 ՀՀ դրամ

7. Համայնքի տարածքում, միջպետական ճանապարհի եզրերին, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ՝ մեկ ամսվա համար:

8. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը)

կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:

9. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:

10. Մանկապարտեզ հաճախող երեխաների համար միանվագ ծնողական վճար սահմանել՝ մեկ երեխայի համար ամսական 4000 ՀՀ դրամ:

11. Արվեստի դպրոց հաճախող երեխաների համար միանվագ ծնողական վճար սահմանել՝ մեկ երեխայի համար ամսական 3000 ՀՀ դրամ:

12. Կիրառել արտոնություններ.

1) Մանկապարտեզ և արվեստի դպրոց հաճախող ծնողազուրկ երեխաներին ազատել վարձավճարից,

2) Մեկ ընտանիքից արվեստի դպրոց կամ մանկապարտեզ հաճախող երեք և ավելի երեխաների դեպքում, մեկ երեխային ազատել վարձավճարից,

3) Արվեստի դպրոց երեք խումբ հաճախող երեխաներին ազատել մեկ խմբի վարձավճարից:

4) Սոցիալական ծանր կացության մեջ հայտնված ընտանիքներին, իրենց դիմումի համաձայն, ազատել տեղական վճարներից՝ հանձնաժողովի ուսումնասիրության և եզրակացության առկայության դեպքում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 20

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1 ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.02.2018 թ.-ի թիվ 01/10.1/824-18 գրությունը՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Արենի համայնքի ավագանու 2018 թ.-ի հունվարի 19-ի թիվ 2 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Հավելված 1-ի 3-րդ և 4-րդ կետերի մեջ դրույքը՝ 0.75 և փաստացի դրույքաչափը՝ 67500 թվերը փոխարինել դրույքը՝ 0.62 և փաստացի դրույքաչափը՝ 55800 թվերով:

2. Հավելված 2-ի

1) 3-րդ կետի մեջ դրույքը՝ 1 և փաստացի դրույքաչափը՝ 80000 թվերը փոխարինել դրույքը՝ 0.75 և փաստացի դրույքաչափը՝ 60000 թվերով,

2) 13-րդ կետի մեջ դրույքը՝ 0.5 փաստացի դրույքաչափը՝ 40000 թվերը փոխարինել դրույքը՝ 0.25 և փաստացի դրույքաչափը՝ 20000 թվերով,

3) 14-րդ կետի մեջ դրույքը՝ 0.5 փաստացի դրույքաչափը՝ 40000 թվերը փոխարինել դրույքը՝ 0.75 և փաստացի դրույքաչափը՝ 60000 թվերով:

3. Հավելված 3-ի 14-րդ կետը վերաձևակերպել հետևյալ կերպ. պաշտոնը՝ հավաքարար, դրույքը՝ 0.5, փաստացի դրույքաչափը՝ 40000:

4. Հավելված 5-ում

1) 11-րդ կետի մեջ դրույքը՝ 1 և փաստացի դրույքաչափը՝ 80000 թվերը փոխարինել դրույքը՝ 0.5 և փաստացի դրույքաչափը՝ 40000 թվերով:

2) 17-րդ կետի մեջ դրույքը՝ 0.75 և փաստացի դրույքաչափը՝ 60000 թվերը փոխարինել դրույքը՝ 0.5 և փաստացի դրույքաչափը՝ 40000 թվերով:

3) նոր՝ 15-րդ կետով ավելացնել 1 հաստիք. պաշտոնը՝ տնտեսվար, դրույքը՝ 0.75, փաստացի դրույքաչափը՝ 60000 հազար ՀՀ դրամ:

Կողմ -10

Դեմ -0   Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
9. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 21

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԷԴԳԱՐ ՎԱԼԵՐԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով, Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Էդգար Վալերիկի Հայրապետյանի դիմումը Խաչիկ բնակավայրի նախկին հիվանդանոցի ներկայիս հանրակացարանի շենքի մի մասի անհատույց տրման մասին Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի 10 փողոց, 1 հանրակացարան հասցեում գտնվող նախկին հիվանդանոցի ներկայիս հանրակացարանի շենքից ընդհ մակերես 403.2 քառ. մետր, 65.52 քառ. մետր, նույնքան նկուղային հարկ և տարածքի սպասարկման համար անհրաժեշտ 460 քառ. մետր հողամաս անհատույց տրամադրել Խաչիկ բնակավայրի բնակիչ Էդգար Վալերիկի Հայրապետյանին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
9. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
10. ՍԻՄՈՆՅԱՆ [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ